«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Առարկան՝ Հայոց պատմություն

Հետազոտող ուսուցիչ՝ Վարուժան Խաչատրյան

Ուսումնական հաստատություն՝ Արարատի մարզի Մասիս քաղաքի թիվ 3 հիմնական դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

Ներածություն էջ 3-4
Հետազոտություն էջ 5-16
Եզրակացություն էջ 17

Ներածություն

Դաստիարակությունը՝ որպես արժեքների մի ընդհանուր համակարգ, մարդկային միտքը զբաղեցրել է շատ վաղուց՝ դեռևս անհիշելի ժամանակներից: Այդ գաղափարները, որոնք հետագայում դարձան արժեհամակարգ, պետք է անցնեին երկար և դեպի կատարելագործում գնացող ճանապարհ: Հետագայում դաստիարակությունը ձեռք բերեց որոշակի ուղղվածություն և ենթարկվեց գաղափարական ներգործությունների: Այս դեպքում դաստիարակությունը ունեցավ նաև առանձնահատուկ նշանակություն մի շարք ժողովուրդների հետագա ներքին և արտաքին գործելակերպի վրա: Դաստիարակությունը այնքան մեծ արժեք ձեռք բերեց, որ շուտով դարձավ գաղափարախոսություն որոշակի ժողովուրդների և պետական համակարգերի համար: Դաստիարակության խնդիրը ոչ միայն որոշակի կանոններ մարդուն սովորեցնելն է,այլև ներքին և արտաքին քաղաքականության որոշակի տարրերի դրսևորում է: Դաստիարակության գործում կարևոր դեր էին խաղում նաև առակները: Առակների դերը հատկապես մեծ է եղել կրոնական ուսմունքների և տարածման, ինչու չէ նադաստիարակման գործում, որը հետագայում հսկայական նշանակություն ձեռք բերեց ամբողջ մարդկության համար: Առակների դերը գնալով այնքան աճեց ,որ դարձավ գաղափարախոսությունների հիմնական անկյունաքարերից մեկը: Դա ուներ իր պատճառները.

ա)առակները ավելի լավ էին հասկացվում հասարակ ժողովրդի կողմից,

բ)նրանց գիտակցության մեջ ավելի նստվածք էր տալիս,

գ)առակները պատմվում էին նյութական կարողությունների օրինակներով, որը ավելի մոտ էր այդ ժամանակվա մարդկանց հոգեբանությանը:

Եթե ուշադիր զննելու լինենք, ցանկացած կրոն հիմնականում ուսուցանում է որոշակի գաղափարներ, որոնց հասնելու և տարածելու համար կարևոր դեր է խաղում դաստիարակությունը, որն էլ իր հերթին տարածվում էր առակների միջոցով: Հիսուս Քրիստոսը պատահական չէր խոսում առակներով: Ինչպես ինքն է վկայում .«Ես նրանց հետ պետք է խոսեմ առակներով, որ իրենք էլ չհասկանան, մտածեն և գան ճշմարիտ վարդապետության»:

Առակները գործիք էին Քրիստոնեությունը տարածելու գործում, և դա հաջողվեց Հիսուս Քրիստոսին և նրա հետևորդներին հետագայում: Առակների կրոնական և դավանաբանական կողմերին անդրադառնալը մեր հիմնական նպատակը չէ: Մեզ հետաքրքրող կողմն է առակների միջոցով Քրիստոնեությանը նվիրված ճշմարիտ կողմնակիցներ և քարոզիչներ պատրաստելու գործունեությունն է: Քրիստոսը, լինելով Աստված և Աստծո որդի, շատ լավ հասկանում էր, թե ինչ ազդեցություն կունենան առակները իր վարդապետության տարածման և հաստատման համար: Բացի դրանից առակների օգտագործումը նոր երևույթ էր կրոնական գաղափարների տարածման ընթացքում: Ինչպես ասվեց վերը, մեր նպատակը Աստվածաշնչյան առակների դաստաիարակչական նշանակությունը մեկնաբանելն է, դրանց նշանակությունը Քրիստոնեության տարածման և զարգացման գործում: Աստվածաշունչը հենց ամենամեծ դաստիարակաչական աշխատությունն է , որը երբևէ ստեղծել է մարդկությունը մինչև այսօր: Դա է պատճառը, որ այսքան մեծ տեղ է հատկացվում

Քրիստոնեական դաստիարակությանը: Մեր կարծիքով այն պետք է լինի բխված ճշմարիտ ուսմունքից և զերծ մնա առանձին մարդկանց և մարդկային խմբերի անհատական շահերին ծառայելուց: Այսինքն՝ մարդն ինքը պետք է հարմարվի Աստվածաշնչին և ոչ թե հակառակը: Այս նպատակով էլ մենք կփորձենք մեկնաբանել և վերլուծել առակների, հատկապես Աստվածաշնչյան առակների կարևորությունն ու իմաստային արտահայտամիջոցներն ու դաստիարակչական նշանակությունը:

Հետազոտություն

Աստվածաշնչում որոշակի տեղ են զբաղեցնում առակները: Առակներ սկսեցին պատմվել Նոր Կտակարանում Հիսուս Քրիստոսի կողմից: Առաջին հայացքից առակները կարելի է դասել անցողիկ պահերի շարքին: Բայց իրականությունը լրիվ այլ է : Քրիստոսը իր քարոզների մեծ մասը կատարում էր առակների միջոցով: Քրիստոսը իր քարոզչության ընթացքում պատմել է մոտ քառասունհինգ առակներ: Ինչու՞ առակներով: Հարցը կայանում է նրանում, որ առակներով խոսքը ոմանց համար ավելի հասկանալի էր, քան մյուսներին: Ինչ էր տեղի ունենում: Հրեաները, որոնց համար Քրիստոնեությունը նոր գաղափար և ուսմունք էր, դժվար էին ըմբռնում: Այն մարդիկ, որոնք իրապես ուզում էին ընդունել այդ ուսմունքը և փրկվել, հասկանում և ըմբռնում էին առակների իմաստը: Դրա համար էլ Քրիստոսը քարոզում էր առակներով: Քրիստոսը պատմում էր առակներ, որոնք հիմնականում վերաբերվում էին փրկությանն ու Աստծո Արքայությանը: Առակները կարելի է բաժանել հեշտ և դժվար ըմբռնելի խմբերի: Աստվածաշնչում ամենից շատ պատմվում է «Սերմնացանի առակը: Այն ամբողջությամբ հասկանալու համար մեջ բերենք սկզբից մինչև վերջ: ՄԱՐԿ. Դ 3-25

«Լսեցէ՛ք, ահավասիկ մի սերմանող սերմանելու ելավ: Եվ պատահեց, որ սերմանելու ժամանակ սերմի մի մասն ընկավ ճանապարհի եզերքը, և թռչունները եկան ու կերան այն:Ուրիշ մի մաս ընկավ ապառաժի վրա, որտեղ շատ հող չկար. և շուտով բուսավ, որովհետև հողը խորը չէր. բայց երբ արևը ծագեց, խանձվեց. և քանի որ արմատներ չուներ, չորացավ: Մի ուրիշ մաս ընկավ փշերի մեջ,փշերը բարձրացան և խեղդեցին այն, և պտուղ չտվեց:Իսկ մի ուրիշ մաս էլ ընկավ լավ հողի վրա, բուսնելով աճեց ու պտուղ տվեց. մեկի դիմաց՝ երեսուն, մեկի դիմաց՝վաթսուն և մեկի դիմաց՝ հարյուր: Եվ ասում էր . « Ով որ լսելու ականջ ունի , թող լսի»:

Երբ առանձին մնաց, նրա շուրջը եղողները, աշակերտների հետ միասին, հարցրին նրան այս առակի մասին: Եվ նրանց ասաց.« Ձեզ է տրված իմանալ Աստծու Արքայութեան խորհուրդները, բայց նրանց համար, որ ձեզնից դուրս են , ամէն ինչ առակներով կը լինի,որպէսզի նայելով հանդերձ չտեսնեն և լսելով հանդերձ չիմանան, որ մի գուցէ երբևէ դարձի գան, և իրենց ներվի»:

Եվ ասաց նրանց. « Այս առակը չէ՞ք հասկանում, ապա ինչպէ՞ս պիտի հասկանաք բոլոր առակները: Նա, որ սերմանում է, Աստծու խօսքն է սերմանում: Ճանապարհի եզերքին սերմանվածները այն մարդիկ են, որոնք լսում են խօսքը, և սատանան գալիս է և դուրս է հանում նրանց սրտերի մէջ սերմանված խոսքը: Ապառաժի վրա սերմանվածները այն մարդիկ են, , որ, երբ լսում են խօսքը, իսկույն ուրախությամբ ընդունում են այն, և որովհետև իրենց մեջ արմատներ չունեն, այլ մի որոշ ժամանակի համար են, երբ խոսքի պատճառով նեղություն կամ հալածանք է վրա հասնում, իսկույն գայթակղվում են: Իսկ նրանք, որ սերմանվեցին փշերի մեջ , այն մարդիկ են, որ լսում են խոսքը, սակայն այս աշխարհի հոգսերը և հարստության պատրանքները ներխուժում և խեղդում են խոսքը, և այն անպտուղ է լինում: Եվ լավ հողի մեջ սերմանվածները այն մարդիկ են, որ լսում են խոսքը և ընդունում ու պտուղ են տալիս. մեկի դիմաց՝ երեսուն, մեկի դիմաց՝ վաթսուն և մեկի դիմաց՝ հարյուր»:

Առաջին հայացքից, կարելի է մտածել, որ այս և նման առակները ինչ առնչություն ունեն դաստիարակության հետ: Բայց, խորը ուսումնասիրելով, կտեսնենք, որ այդ կապը

ամենաուղղակի է, եթե չասենք անմիջական և, որ գլխավորն է հենց, դաստիարակում է ամեն մի խոսքով: Այս առակով Քրիստոսը ցանկանում է մարդկանց մեջ ձգտում առաջացնել դեպի ճշմարիտ Աստվածային ճանապարհը և փրկությունը: Ինչպես է դա տեղի ունենում: Այն որ, փրկությունը միայն իրենով է, գիտեին միայն շատ քչերը: Նրանք էլ դա ամբողջությամբ չէին հասկանում, որովհետև շատ քչերին էր տրված դա հասկանալ: Ինչ էր ուզում Հիսուս Քրիստոսը ասել ,որ Երկնքի Արքայությունը շատերի համար հասանելի չի լինելու: Հարց կառաջանա, որն է այստեղ դաստիարակչական նշանակությունը.

ա) նախ՝ Քրիստոսը քարոզում է բոլորովին նոր գաղափարներ

բ) դա անում է առակների միջոցով

գ) շատ առակներ նա չի մեկնաբանում

դ) մեկնում է միայն իր աշակերտներին

ե) մնացածները իրենք պիտի հասնեն ճիշտ ըմբռնմանը:

Քարոզելով նոր գաղափափարներ՝ Քրիստոսը դրանք համեմում էր առակներով: Ինչու առակներով, որովհետև դրանք այն ժամանակ հասանելի էին շատերին, և հասարակ մարդիկ ավելի լավ էին հասկանում առակների թաքնված իմաստը: Հենց առաջին տողը մեզ ուսուցանում է , որ Աստված ինքն է սերմնացանը և այն էլ բարի ու ճշմարիտ: Հրեաները մինչ այդ գաղափար չունեին Որդի Աստծու և Սուրբ Հոգու մասին: Քրիստոսը դրանով ուզում էր սերմանել ճշմարիտ վարդապետությունը, իսկ դա ինչպես կարող էր անել, եթե ոչ առակներով: Սրանով Քրիստոսը առաջ է քաշում Սուրբ Երրորդության գաղափարը: Սերմերը՝ Աստծու խոսքերն էին , որոնք պետք է լսեին փրկություն հայցողները: Քրիստոնեությունը միայն կրոն չէ: Դաստիարակում էր մարդկային նոր հարաբերությունների հաստատում և սեր ուրիշների նկատմամբ: Սա, ըստ էության, նոր գաղափար էր հրեաների համար, քանի որ մարդասիրություն և այդ կարգի հասկացությունները հիմնականում ենթակայվում էին օրենքին, որ նրանց տվել էր Մովսեսը: Քրիստոսը լրիվ նոր վարդապետություն էր առաջ քաշում: Դա դժվարըմբռնելի էր հրեաների համար: Քրիստոսը փաստորեն դաստիարակում էր նոր սկզբունքներով և նոր սովորություններով, որոնք այնքան էլ ընդունելի չէին հրեաների համար: Դրա համար էլ հրեաները թշնամաբար էին տրամադրված Քրիստոսի նկատմամբ և փորձում էին նրան սպանել: Ինչ վերաբերում է սերմնացանի առակին, այստեղ մենք հանդիպում ենք մի շարք դաստիարակչական պահերի, որոնց վրա պետք է կանգ առնենք և մանրամասն վերլուծենք: Առաջին հերթին դաստիարակության տարր է համարվում հավատալ այն գաղափարներին, որ տարածում էր Հիսուս Քրիստոսը:Իսկ ի՞նչ էր քարոզում նա՝

ա)որ Աստված սիրում է բոլորին,

բ)Նա պաշտպանում է իրեն հավատացողներին,

գ)նրանց հետ է ամենուրեք մինչև աշխարհի վախճանը,

դ)նրանց, իսկ օգտի համար պատժում է, որ այլևս սխալներ թույլ չտան,

ե)պատժում է, բայց չի կործանում:

Աստված սիրով և բարությամբ ստեղծեց աշխարհը և մարդուն: Անգամ Ադամին և Եվային իրենց անհավատարմության և Աստվածային կանոններին չենթարկվելու համար վտարեց Դրախտից, որի պատճառով մարդը ժառանգեց մեղքը և մահը: Սա դաստիարակության իսկական կերպ է: Վտարելով Դրախտից՝ Աստված Ադամին և Եվային չթողեց միայնակ, այլ նրանց տվեց իրավունք իշխել մնացած արարածների վրա: Նրանց փրկեց շատ դժվարություններից: Պատժելով սկսեց դաստիարակել մարդկանց: Այս օրինակով Աստված ցույց տվեց, թե ինչ կարող է լինել, երբ մարդը խախտում է կարգը: Սա դաստիարակության տիպիկ օրինակ է: Դաստիարակել չի նշանակում միայն պատժել, դա երկարատև գործընթաց է, որն էլ Աստված անում է մինչև հիմա: Դաստիարակություն է նաև, որ Աստված մարդկանց հայտնվում է երազներում կամ այլ ձևերով և հեռացնում կամ կանխում է գալիք փորձանքներից: Դրա օրինակները շատ են: Դա հենց ապացուցում է դաստիարակության անընդհատ լինելը ժամանակի և տարածության մեջ: Մարդը սխալական է, բայց Աստված համբերատար և սիրով տանում է մարդուն իր կյանքի ամբողջ ժամանակահատվածում՝ դրանով ցույց տալով դաստիարակության պերմանենտ լինելը: Պատիժը ևս դաստիարակության ձևերից է, բայց այն պետք է կիրառել ճիշտ տեղում և ճիշտ ժամանակին, հակառակ դեպքում պատիժը կդառնա կործանման պատճառ: Դրա համար Աստված պատժում է, բայց չի կործանում: Դա նույնպես արվում է մարդու համար, նրա բարրօրության համար: Աստված միայն մեկ անգամ կործանեց ամբողջ մարդկությանը Նոյի ժամանակներում, ջրհեղեղով վերացրեց աբողջ մարդկությանը, բայց այս դեպքում էլ Նոյին տրվեց աճելու ու բազմանալու հնարավորություն: Աստվածաշնչում շատ են օրինակները, երբ Աստված պատժում է, բայց չի կործանում: Սերմնացանի առակում Աստված ցույց է տալիս մարդկանց տարբեր վիճակներում և տարբեր մտածմունքներ ունեցողների փրկության ու դաստիարակության ճանապարհները: Այդ առակով մենք սովորում ենք լինել հաստատակամ, նպատակամղված, վերջնական արդյունքին հասնելու համար ընտրել ճիշտ ճանապարհ: Դաստիարակության տիպիկ օրինակ է, որ մարդը պետք է ճիշտ ընտրություն կատարի, զերծ մնա սխալներից, որոնք առաջին հայացքից հաճելի ու հեշտ են թվում, բայց դրանք հետագայում դառնում են կործանարար և վնասակար հենց նույն մարդու համար: Պատմելով Սերմնացանի առակը՝ Հիսուս Քիրիստոսը մեզ սովորեցնում է լսել, հասկանալ և ճիշտ օգտվել ընձեռված հնարավորությունից, որ մեզ տրվում է Աստծո կողմից: Դրա համար մարդը մինչև որևէ գործ կատարելը միշտ պետք է մտածի, կշռադատի և նոր քայլ կատարի: Բոլոր առակներում Քրիստոսը սովորեցնում է լինել բարի, մարդասեր և օգնող նեղության մեջ գտնվողներին, որովհետև Աստված ինքը սեր է, բարրություն և ամեն ինչ անում է մարդու՝ իր իսկ փրկության համար: Շատ դեպքերում մարդն ինքն է ընտրում սխալ ճանապարհը, գնում կործանման և, չհասկանալով իր սխալները, մեղադրում է մյուսներին՝ անգամ Աստծուն: Սերմնացանը Աստված ինքն է. սերմը՝ Աստծո խոսքը, որն ամեն մարդ ընկալում է յուրովի և իրագործում է նույնպես իր ցանկացածի պես: Հենց այստեղից էլ սկսվում է սխալ և վնասաբեր ճանապարհը մարդու կյանքում, որը Աստված երբեք չի ցանկանում: Սերմնացանի առակով Քրիստոսը մեզ ցույց է տալիս դաստիարակության մի քանի մեթոդներ և դրանց հասնելու ճիշտ ուղիները: Այսպես. մարդը լսում է Աստծո խոսքը,

բայց,նորից ենք կրկնում, այն կիրառում՝ ըստ իր կամեցողությամբ, մոռանալով, որ Աստված տվել է նաև դրան հասնելու ճիշտ և միակ ճանապարհը, որքան էլ այն լինի դժվար և ոչ ցանկալի մարդուն: Այստեղ սկսվում է դաստիարակության մի նոր փուլ: Աստված սկսում է մարդուն տանել այն ճանապարհով, որը ճիշտ է և փրկարար: Շատ դեպքերում ստիպված հարկադրում է մարդուն կատարել իր կամքը, որքան էլ մարդ դա չցանկանա: Առակների դաստիարակչական նմուշ կարելի է համարել նաև այն, որ Աստված շատ դեպքերում ուղղակի ասում և ցույց է տալիս գործելակերպը, թե ինչպես վարվել, որ ճիշտ և լավ ստացվի, հակառակ դեպքում ինչ կստացվի և ուր կտանի դա մարդուն, կարծում ենք պարզ է: Ցավոք, մարդը, ելնելով ինչ-ինչ պատճառներից, չի կատարում ճշմարիտ քայլեր իր կյանքում, որի համար պատժվում է, իսկ հաճախ այդ սխալները դառնում են ճակատագրական: Աստված մարդուն տվել է ազատ կամք և բանականություն, որ մարդն ինքը հասնի իր երազանքներին՝ հասկանալով և գիտակցելով իր քայլերը: Դրա համար էլ առակի վերջում միշտ ասում է.«Ով ականջ ունի, թող լսի»: Մեկնաբանելով առակը՝ Քրիստոսն ասում է,- << Ով հասկանում և ընդունում է խոսքը, նա շահում է: Այն մարդը, ով կատարում է պատվիրանը, նրան էլ ավելի է տրվում և ավելացվում նրա ունեցածի վրա, իսկ ով չի ընդունում և չի կատարում տիրոջ խոսքը և պատվիրանները, նա կորցնում է իր ունեցածը. այսինքն նրանից վերցվում է նաև այն, որ ուներ: Դա ինչ է նշանակում:

Դա նշանակում է, որ մարդ սխալ պահվածքի, սխալ գործունեության հետևանքով ընկնում է այնպիսի իրավիճակի մեջ, որ կորցնում է այն ամենը, որ ձեռք էր բերել իր ամբողջ կյանքի ընթացքում և ինքն էլ հայտնվում է անելանելի իրավիճակում: Առակում խոսվում է նաև այն մարդկանց մասին, ովքեր լսում են Աստծո խոսքը, բայց չեն պահում: Նրանց սրտերում և հոգու մեջ տեղ չի գտնում ճշմարիտ խոսքը: Դրա փոխարեն նա իր մեջ տեղ է տալիս վատ, սխալ և կործանարար մտքերին և ճանապարհներին, որի վերջը կործանարար է դառնում հենց նույն մարդու համար: Կյանքի որոշակի հատվածում, երբ մարդն սկսում է վերլուծել իր կատարած սխալները, հաճախ մոռանում է դրանց մասին, թե ինչպես ինքը հայտնվեց նման իրավիճակում և որտեղ թույլ տրվեց այդ սխալը: Սերմնացանի առակում խոսվում է նաև մի այլ մարդկային խմբի մասին, որոնց հասարակությունը, կյանքի դժվարությունները, սոցիալական պայմանները մղում են ոչ ճիշտ կյանքով ապրելուն և հեռանում են օրինականության ճանապարհից, որն էլ տանում է նրանց, եթե ոչ կործանման, գոնե նրանց կյանքը վերածվում է մղձավանջի: Սերմնացանի առակում խոսվում է նաև խելացի մարդու մասին, ով լսում է խոսքը, կատարում է այն և ավելացնում է իր ունեցածը: Ինչ է նկատի առնվում ունեցած ասելով: Այս դեպքում խոսքը վերաբերվում է և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ կյանքով ապրելուն: Բոլորը չեն, որ հոգևոր կյանքը գերադասում են աշխարհիկ կյանքից: Այս աշխարհի հաճույքները, հարստության տենչը, շքեղ կյանքը հաճախ մարդուն տանում են ուրիշ ճանապարհով և դառնում կործանման պատճառ: Քրիստոսը, խոսելով առակներով, մի անգամ ևս ցույց տվեց, որ այն ինչ քարոզում է ինքը դա զուտ ճշմարտություն է և միակ ճշմարիտ ճանապարհը դեպի փրկություն և հավիտենական կյանք: Ինչպես նշեցինք վերը, Հիսուս Քրիստոսը պատմել է այլ առակներ ևս, բայց դրանցից շատերը չի մեկնաբանել թողնելով կամ մարդկանց մտածողությանը, կամ գաղափարական հասունությանը՝ ըմբռնելու դրանք: Այդ առակները սկզբից մինչև վերջ ունեն դաստիարակչական նշանակություն: Չնայած

ոմանք գտնում են , որ առանց առակների էլ տեղի կունենար այն, ինչ որ տեղի ունեցավ: Մեր կարծիքով դա մոլորություն է և աղանդավորական ոչ հիմնավորված տեսակետ: Չորս տիեզերական ժողովներում միայն Քրիստոնեական ղեկավարները կարողացան հաստատել այն գրականությունը, որ մտավ Աստվածաշունչ և այն մենք տեսնում ու կարդում ենք: Բացի դրանից Քրիստոսը, լինելով Աստված, միթե՞ չգիտեր, թե ինչպես է պետք քարոզել և ինչ արդյունքի կհասնի առակների միջոցով: Եթե հավատալու լինենք Աստվածաշնչին, իսկ մենք չհավատալու հիմքեր չունենք (քանի որ խոսում ենք հենց Աստվածաշնչի մասին), որ ինչ գրված է վաղուց կանխատեսված էր Նույն Աստծո կողմից, մինչև աշխարհի արարումը: Աստվածաշունչը մեզ սովորեցնում և դաստիարակում է լինել ազնիվ, առաքինի, շիտակ և երկրպագել նրան, ով մեզ արարել է: Հակառակ դեպքում այդ մասին խոսելը կլիներ անիմաստ և իզուր ժամանակի վատնում: Բայց Աստվածաշունչը աշխարհի ամենաշատ տպագրված գիրքն է, որը կարդում են միլիարդավոր մարդիկ և ընդունում, չի կարող լինել սուտ և անօգտակար: Հակառակ դեպքում Աստծո գոյությունն ու գաղափարը նույնպես կլիներ սուտ և կբացահայտվեր մի օր: Բայց, ինչպես տեսնում ենք, կատարվեց ճիշտ հակառակը, և դա ապացուցվեց անթիվ և անհամար օրինակներով և հաստատեց իր ճշմարտացիությունը մեր կյանքում: Այնպես որ առակները, կազմելով Աստվածաշնչի մի մասը, չէին կարող երկրորդական նշանակություն ունենալ Քրիստոսի քարոզների համար: Առակներով խոսելը հրեաներին ավելի հասկանալի ու ըմբռնելի էր, հասնելու ճշմարտությանը, մտնելու Աստծո Արքայություն հավերժական կյանքով ապրելու համար: Դրանից կարելի է բխեցնել, որ առակները ոչ միայն երկրորդական չեն, այլև անհրաժեշտ են ու շատ կարևոր մարդկանց փրկության համար: Ինչպես Քրիստոսն ինքն է ասում. «Ով ականջ ունի , թող լսի»: Հասկանալու համար այն ամենը , ինչ արվեց, հենց նույն մարդու համար, ով ընդամենը երեք տարի անց պիտի խաչեր իր Փրկչին Գողգոթայում և դասեր ավազակների շարքը: Աստված ինչքան էր սիրում մարդկանց, որ կամովին խաչը բարձրացավ: Միթե՞ սա ամենաազդեցիկ և բացահայտ ու համոզիչ օրինակը չէ ամբողջ մարդկության համար և ամենամեծ դաստիարակչական նշանակությունը ողջ մարդկային հասարակության համար: Մենք գտնում ենք, որ Աստվածաշունչը ծայրից – ծայր ունի դաստիարակչական նշանակություն, իսկ առակները՝ առավել ևս: Սերմնացանի առակով Հիսուս Քրիստոսը ոչ միայն ցույց է տալիս իր Աստվածային լինելը, այլև քարոզում է, թե ինչպես հասնել այն երանելի վիճակին, որ Աստված ուզում է մարդկանց փրկության տանել և հասցնել ճշմարտության ճանապարհին: Այս առակում խոսվում է նաև այն ուղիների մասին , որոնք ճմարիտ են և միակ, խելացի և իմաստուն գործելակերպով մարդը կարող է հասնել դրան: Քրիստոսը ասում է .«Ես եմ կյանքը, լույսը: Ինձ մոտ եկեք հոգնածներ և հիվանդներ, մոլորվածներ և սգավորներ և Ես ձեզ կսփոփեմ և ձեր ծարավը կհագեցնեմ, հավիտենական կյանք պարգևելով»: Հրեաները չէին հասկանում ,թե խոսքը ում և ինչի մասին է: Նրանք չէին պատկերացնում, որ Հիսուս Նազովրեցին, ում իրենք ճանաչում էին, կարող է լինել Մեսիան (փրկիչը): Քանի որ մինչ այդ Նազարեթից ոչ մի խելացի մարդ կամ մարգարե դեռ դուրս չէր եկել, դա ինչպես կարող էր փրկել մարդկանց: Այդ պատճառով հալածում էին Քրիստոսին և նրա աշակերտներին: Շատերն էլ ասում էին, որ այդ ամենը Հիսուս Նազովրեցին անում է Բեղզեբուղի՝ չար դևերի ղեկավարի միջոցով: Բայց Սերմնացանի առակում պարզ ասվում է, որ նա ով

ականջ ունի, թող լսի և հասկանա, թե ինչ է ասում Աստված և Իսրայելի թագավորը մեղքի մեջ մեռած և ապրող մարդկանց փրկվելու համար: Այս խոսքերը պատահական չեն ասվում Աստվածաշնչում, ոչ մի խոսք պատահական չէ, այլ գրված է Աստծո կամքով և գիտությամբ: Աստված այս առակում ցույց է տալիս, թե ինչպես կլինի այն մարդկանց հետ, ովքեր չեն ուզում լսել ճշմարիտ խոսքը և հասնել փրկության:

Սրանք այն մարդիկ են, որ կիսատ – պռատ են ընդունում Քրիստոնեության գաղափարները: Իսկ այն մարդիկ, ովքեր լսում, իրենց սրտում, հոգում պահում են Աստվածային փրկարար խոսքը, նրանց տրվում է ավելին, և ավելացվում է նրանց ունեցածի վրա: Այստեղ խոսքը վերաբերվում է հոգևոր արժեքներին և ունեցվածքին: Սերմնացանի առակով Հիսուս Քրիստոսը նախ խոսում է Աստծո արքայության մասին , բացատրում նրա էությունը և ցույց է տալիս այն ճանապարհը, որով մարդը պետք է գնա՝ հասնելու փրկության: Քրիստոսը ոչ մեկին չի պարտադրում կամ համոզում այսպես կամ այնպես անելու: Չի ասում, թե ինչ կլինի հետագայում, այլ տալիս է ընդհանուր գաղափարը, որ մարդն ինքը մտածի և կարողանա քայլել դեպի ճշմարտություն և հասնի փրկության: Այստեղ խոսվում է նաև մարդկանց մեջ հոգևոր արժեքներ սերմանելու մասին, իսկ դրանց կարելի է հասնել միայն դաստիարակության միջոցով: Այսինքն՝ Սերմնացանի առակը ծայրից ծայր հագեցած է դաստիարակչական գաղափարներով, առանց որոնց չէր կարելի հասնել ցանկալի արդյունքի: Դաստիարակությունը այս դեպքում դառնում է պարտադիր տարր՝ Քրիստոնեության ուսմունքը տարածելու համար: Քրիստոսը, ինչպես ասվեց, պատմել է շատ առակներ, որոնք ունեին մեծ դաստիարակչական նշանակություն հրեաների համար՝ դարձի գալու ու փրկվելու: Առակները միշտ էլ մեծ տեղ են գրավել մարդկանց առօրյա կյանքում: Այդ ժամանակներում մարդիկ իրենց երեխաներին կամ ուրիշներին դաստիարակում էին նաև առակներով: Քրիստոսի պատմած առակները հետագայում դարձան մարդկանց կենցաղային խոսակցական առակներ: Դա ցույց է տալիս, թե որքան խորն էին թափանցել Քրիստոնեական գաղափարները մարդկանց կենցաղ և առօրյա, էլ չենք խոսում հոգևոր աշխարհի մասին: Ինչպես ասվեց, Քրիստոսը առակներ պատմել է նաև այլ առիթներով և տարբեր բովանդակությամբ: Դրանք նույնպես ունեին դաստիարակչական նշանակություն: Սերմնացանի առակը ցույց է տալիս՝ որքան մեծ է դրանց դաստիարակչական նշանակությունը ոչ միայն հրեաների, այլև մյուս ժողովուրդների համար: Բացի Սերմնացանի առակից, ինչպես ասվեց, Հիսուս Քրիստոսը պատմել է ուրիշ շատ առակներ ևս:Այդ առակներից շատերը այնքան էլ մեծ տարածում չէն գտել, բայց որոշ առակներ մեծ տարածում են ստացել: Այդ առակների թվին է պատկանում նաև «Որոմների առակը»: Այս առակը ճիշտ ըմբռնելու համար ցանկալի է այն մեջ բերել ամբողջությամբ.

ՄԱՏԹ. ԺԳ 24-30

«Երկնքի արքայությունը նմանվեց մի մարդու, որ իր արտի մեջ բարի սերմ սերմանեց: Ով երբ մարդիկ քնի մեջ էին, նրա թշնամին եկավ և ցանած ցորենի վրա որոմ ցանեց ու գնաց: Եվ երբ ցորենը բուսավ ու պտուղ տվեց, ապա երևաց այն որոմը: Տանտիրոջ ծառաները մոտեցան ու ասացին նրան.«Տե՛ր, չէ՞ որ քո արտի մեջ դու բարի սերմ սերմանեցիր, ուրեմն որտեղի՞ց է այդ որոմը»:Եվ տերն ասաց նրանց.«Թշնամի մարդ է արել այդ»: Ծառաները նրան ասացին.«Կամենո՞ւմ ես, որ գնանք ու քաղենք հանենք

այն»: Եվ տերը նրանց ասաց.«Ո՛չ,միգուցե որոմը քաղելիս, ցորենն էլ նրա հետ արմատախիլ անեք: Թողե՛ք, որ երկուսն էլ միասին աճեն մինչև հունձը, և հնձի ժամանակ ես հնձողներին կասեմ՝ նախ այդ որոմը քաղեցեք և դրանից խուրձեր կապեցեք այրելու համար, իսկ ցորենը հավաքեցեք իմ շտեմարանների մեջ»: 36-43

Այն ժամանակ Հիսուսը, արձակելով ժողովրդին, տուն եկավ, և աշակերտները մոտեցան նրան ու ասացին. «Մեկնի՛ր մեզ համար արտի որոմների առակը»: Նա պատասխանեց ու ասաց. «Այն, որ սերմանում է բարի սերմը, մարդու Որդին է, իսկ արտը այս աշխարհն է. բարի սերմը նրանք են, որ Արքայության որդիներն են, իսկ որոմը չարի որդիներն են և թշնամին, որ այն ցանեց, սատանան է. իսկ հունձը այս աշխարհի վախճանն է, և հնձողները հրեշտակներ են: Ինչպես որոմը հավաքվում է և կրակի մեջ այրվում, այնպես էլ կլինի այս աշխարհի վախճանին: Մարդու Որդին կուղարկի իր հրեշտակներին, և նրանք կհավաքեն նրա Արքայությունից բոլոր գայթակղությունները և նրանց, որոնք անիրավություն են գործում: Եվ կգցեն նրանց բոցավառ հնոցի մեջ, այնտեղ կլինի լաց և ատամների կրճտում: Այն ժամանակ արդարները երկնքի Արքայության մեջ կծագեն ինչպես արեգակ: Ով լսելու ականջ ունի, թող լսի»:

Հիսուս Քրիստոսը, պատմելով այս առակը, հեռացավ ժողովրդից: Սակայն որոմներինը մանրամասնություններով և դժվարիմաց կողմերով ավելի էր գրավել աշակերտներին և նրանց հետ եղողներին: Որոմներին աճելուն տրված համաձայնությունը շփոթության էր մատնել նրանց միտքը: Առաքյալները խնդրում են Քրիստոսին, որ իրենց համար մեկնաբանի այդ առակի իմաստը: Քրիստոսը առանց դժվարության բավարարում է աշակերտների հետաքրքրությունը՝ մեկնելով առակը: Հիսուս Քրիստոսը նախ առակում հիշված անձերի և իրերի դեմ հանդիման բացա տրություն է տալիս:

Ագարակատերը, որ սերմանել է տալիս, Մարդու Որդին է , այսինքն՝ Ինքը՝ Հիսուս Քրիստոսը: Ագարակը, որ սերմանվում է այս աշխարհն է: Ցորենի լավ սերմը Արքայության որդիներն են, այսինքն՝ լավ մարդիկ ու Երկնից Արքայության հետևողները: Թշնամին, որ որոմը ցանեց սատանան է: Որոմի վատ սերմը չարի որդիներն են, այսինքն՝ գայթակղություն առաջացնողներն են, անօրինություն գործողներն են Երկնքի Արքայության մեջ: Հունձքը աշխարհի վերջն է, երբ ամեն ինչ պիտի վերջանա: Հնձողները հրեշտակներն են՝ ագարակատեր Հիսուս Քրիստոսի մշակներն ու սպասավորները: Քրիստոսի առակներում նշանավոր տեղ է գրավում որոմների առակը, որովհետև բացատրում է Աստվածային նախախնամության գաղտնիքներից մեկը՝ չարերի նկատմամբ ցուցաբերած աստվածային երկայնամտության խորհուրդը: Սա հանդիսանում է Աստվածային նախախնամության անթափանցելի գաղտնիքներից ամենամեծը: Աստվածային բարկության և արդարության նշաներն անմիջապես չեն սփռվում աշխարհի վրա, քանի որ աշխարհում դեռևս խառն է նրանց կենցաղը, չարերին հասած վտանգներից կարող են վնասվել նաև բարիները: Բայց կգա մի օր, երբ ամեն մարդ պատասխան կտա իր արարքների համար: Այդ ժամանակ կառանձնացվեն չարն ու բարին, և ավելի հեշտ կլինի նրանց իրենց գործերի համեմատ հատուցելը: Ցորենը պատվով կպահվի սննդի համար, իսկ որոմը անարգանքով կնետվի կրակը և կվերանա մեջտեղից: Որպեսզի

առակի իմաստը լավ տպավորվի Քրիստոսը ավելացնում է. « Իրավունք ունեք հասկացած լինելու գոհունակությունը հայտնել, որովհետև դուք, որ լսել եք Իմ քարոզությունները, աշակերտել եք Երկնքի Արքայությանը, Դուք Ավետարանի ուսյալները կամ դպիրներն եք եղել, և ձեզ հետ ձեր նման Ավետարանի ուրիշ աշակերտներ էլ, նմանվում եք մի հարուստ տանտիրոջ, որ իր գանձերի մեջ ամեն տեսակի ինչք ու հարստություն ունի. դու էլ, ձեր մտքի գանձից կարող եք հանել թե Հին Օրենքի պատգամների նշանակությունը և թե՛ Նոր Օրենքի քարոզությունների իմաստը»:

Ինչպես տեսնում ենք Քրիստոսը, պատմելով այս առակը, նույնպես մեկնում է այն՝ տալով մանրամասն բացատրություններ իր առաքյալներին: Ինչու՞ է դա անում: Առաջին հերթին՝ Քրիստոսը այս առակը պատմելիս նկատի է առնում Երկնքի Արքայությունը և այն իրավիճակը, թե ինչ է սպասվում Իրեն չճանաչողներին և իր պատգամները չպահողներին: Հիսուս Քրիստոսը ոչ միայն քարոզում է, այլ նաև սովորեցնում հասնելու Երկնքի Արքայությանը: Դրա համար էլ տալիս է առակի մանրամասն բացատրությունը: Նախ՝ ո՞վ է սերմնացանը. դա հենց ինքն է Աստված, որ ստեղծեց ամեն ինչ երկնքում և երկրի վրա: Քանի որ ամեն ինչ իր ձեռքի գործն էր, ուրեմն՝ նաև սրտացավ է: Հակառակ դեպքում ոչինչ էլ չէր լինի ոչ Երկնքում,՛ ոչ էլ հատկապես երկրի վրա: Սա այն հիմնարար սկզբունք է, որի շուրջ Հիսուս Քրիստոսը կառուցում է իր քարոզչության մնացած սկզբունքները:

Ագարակը, որ սերմանվում է, այս աշխարհն է: Դա ինչ է նշանակում: Դա նշանակում է, որ նա իր ձեռքով արարածը չէր թողնի, որ այդպես չարի կողմից կործանվեր և գնար այրվելու դժողքի կրակների մեջ:

Ցորենի լավ սերմը Արքայության որդիներն են, որոնք պիտի ժառանգեն Արքայությունը և վայելեն իրենց երջանիկ կյանքը հավիտենապես և արդարացի:

Թշնամին, որ վատ սերմ ցանեց չարն է, որ ամեն կերպ աշխատում է մարդկանց տանել դեպի կործանում ու դժողք:

Որոմի վատ սերմը չարի որդիներն են, ովքեր ամեն ինչ անում են մարդկանց մոլորեցնելու և ճշմարիտ ճանապարհից շեղելու համար:

Հունձքը աշխարհի վերջն է. այսինքն՝ տրամաբանական վախճանը ամեն ինչի:

Հնձողները Հիսուս Քրիստոսի մշակներն են, այսինքն հրեշտակները, որոնք անվերապահ կատարում են Տիրոջ կամքը:

Այս առակում կա մի շատ հետաքրքիր պահ, երբ խոսք է գնում որոմները արմատախիլ անելու մասին: Ագարակատերը թույլ չի տալիս, որ, մշակները արմատախիլ անելով, վերացնեն որոմները, այսինքն՝ չարի հետևորդներին: Հարց է առաջանում. ինչու՞:

Այս հարցին պատասխանելու համար նախ պարզաբանենք, թե ով է ագարակատերը: Ինչպես վերը նշեցինք, Ագարակատերը դա ինքը Տեր Աստվածն է, այսինքն ՝ Հիսուս Քրիստոսը: Աստված իր կենարար ձեռքով ստեղծեց աշխարհը, այդ թվում նաև մարդուն՝ Ադամին: Սրանից հետևում է, որ Աստված չէր կարող թույլ տալ, որ չար հրեշտակը կործաներ այն, ինչ – որ ստեղծել է Աստված: Հենց Արարման բաժնում

ասվում է .«Այն ամենը, որ ստեղծեց Աստված բարի է», իսկ Աստված ինքը բարությունն է , էլ ինչպես կարող էր թույլ տալ չարին կործանելու ամեն ինչ: Դա կնշանակեր, որ չարը ավելի հզոր է քան Աստված, իսկ դա լինելու չէ: Աստված չարին Երկնքի Արքայությունից վռնդեց, հենց այն բանի համար, որ չարը չկատարեց Աստծու կամքը և չերկրպագեց Աստվածաստեղծ արարածին՝ մարդուն: Դրա համար էլ Աստված թույլ չտվեց , որ բարի մշակները արմատախիլ անեն որոմները, այսինքն՝ չարը: Աստված այստեղ էլ ցույց տվեց իր գթասրտությունը մարդու հանդեպ, չնայած նրա վատ լինելուն: Վատին հնարավորություն տվեց իր կյանքի ընթացքում փոխվելու և դառնալու դեպի ճիշտ Աստվածային փրկությունը և ժառանգելու հավիտենական փրկությունը: Այս գաղափարը ընկած է բոլոր առակների հիմքում, թե ինչպես մարդիկ կարող են փրկվել՝ ցույց տալով փրկության միակ ճանապարհը, որ Աստված է: Ահա, թե ինչու Ագարակատերը թույլ չտվեց արմատախիլ անել որոմները: Դա թողնվեց Մեծ Դատաստանի օրվան, երբ միևնույն է պիտի տեղի ունենա այն, ինչ կանխատեսել է Աստված: Բայց, ինչպես ասացինք, Աստված այնքան սիրեց մարդկանց, որ իր միածին որդուն ուղարկեց աշխարհ՝նրանց փրկելու հավիտենական կործանումից: Որոմների առակով Աստված մեզ սովորոցնում է , որ միշտ էլ կարելի հետ դառնալ վատ ու սխալ ճանապարհից և կանգնել ուղիղ և ճմարիտ ճանապարհի վրա: Դաստիարակաչական առումով այս առակը շատ մեծ նշանակություն ունի բոլոր մարդկանց համար: Դա ճիշտ հասկանալու համար վերլուծենք առակի դաստիարակչական կողմը:

ա)Սերմնացանի առակը առաջին հերթին մեզ սովորեցնում է հավատարիմ լինել այն գաղափարներին, որոնց մենք ձգտում ենք ամբողջ կյանքում:

բ)Այդ ձգտումների մեջ կարողանանք մնալ ճշմարիտ և առաքինի և դուրս չգանք բարոյականության և ճշմարտության սահմաններից:

գ)Հավատարիմ լինենք մեր Տեր Աստծուն, ով հանդիսանում է ամենամեծ ուսուցիչը:

դ)Քայլենք և ապրենք հնարավորինս ազնիվ , որ հետագայում չզղջանք մեր գործերի համար:

Դաստիարակության առումով և մեր կարծիքով Քրիստոսը հենց սրան էլ ձգտում էր: Բարություն, ազնվություն, ընկերասիրություն, ուրիշներին նեղության մեջ հասնել, ամեն ինչ Աստծո կամքով անել, միթե այս գաղափարները հենց դաստիարակության հիմքում ընկած չէն: Մեր կարծիքով այս ամենը արվում է հենց այս նպատակով: Այսինքն. Աստված իր Արարածներին նախապատրաստում է գալիք օրերի համար, որ նրանք չընկնեն չար հարևանի վիճակի մեջ, երբ կգա պատասխան տալու ժամանակը: Իսկ այդ ժամանակը ոչ միայն կգա, այլև անվերապահ կլինի այնպես, ինչպես կամենում է Տեր Աստված ինքը: Ինչպես վերը նշեցինք, Աստվածաշունչը ամենամեծ դաստիարակաչական ձեռնարկն է, որ երբևիցե կա ու կլինի մարդկային գիտական մտքի պատմության մեջ:

Դաստիարակության մեջ մեծ դեր ունի հավատարիմ լինելու գաղափարը: Երբ մարդ հավատարմության մասին շատ թյուր կարծիք ունի, այդպիսի մարդը չի կարող լինել հավատարիմ և հարկ եղած դեպքում կարող է դավաճանել և դառնալ թշնամու ձեռքին գործիք, որը կտանի նրան դեպի կործանում: Քրիստոսը ինքը հենց հավատարմության

կերտողը եղավ մարդկության պատմության մեջ: Մենք հենց Նրա օրինակին պետք է հետևենք:

Ցանկացած մարդ, ով հասնում է գիտակցական մակարդակի և սկսում է հասկանալ կյանքի որոշակի գաղափարներ, ձգտում է բարձունքների և՛ ֆինանսական, և՛ աշխարհիկ, ինչու չէ, նաև հոգևոր կյանքում, որը շատ խրախուսելի է: Բայց այդ ճանապարհը, միշտ չէ, որ լինում է հարթ և հեշտ: Որպես կանոն՝ կյանքում միշտ էլ լինում են դժվարություններ, խորդուբորդ արգելքներ և այլն: Հաճախ մարդը դրանք հաղթահարելու համար դիմում է այնպիսի միջոցների, որոնք թույլատրելի չեն ոչ մի պարագայում: Ելնելով կյանքի դժվարություններից՝ մարդը հաճախ թույլ է տալիս այնպիսի արարքներ, որ ոչ միայն չի կարելի, այլև դատապարտելի է և կործանարար: Շեղվելով ճիշտ ճանապարհից՝ մարդը հեռանում է նաև Աստվածային ճիշտ ուղուց և ընկնում ահավոր վատ վիճակի մեջ, որը նրան տանում է կործանում: Դրա համար Հիսուս Քրիստոսը հենց ինքն է դառնում այն օրինակը, որին պետք է հետևել ամբողջ կյանքի ընթացքին՝ դուրս չգալով բարոյականության և պատշաճության սահմաններից, ինչքան էլ, որ կյանքում դժվարություններ պատահեն:

Մարդ հաճախ մտածում է այսպես. կանեմ այն կամ այս, առանց հասկանալու, որ այս կյանքի բարիքները տրվում են Աստծո կողմից և ոչ ուրիշ մեկի: Հույսը դնելով իր վրա՝ նա ուզում է հասնել բարրօրության, բայց դա այնքան էլ հեշտ չէ: Աստծու կամեցողությունը եթե չլինի, մարդը ոչ մի բանի էլ չի կարող հասնել. դա անհնար է: Դա պետք է հասկանալ և ընդունել՝ որպես անվերապահ գաղափար և կյանքի ուղենիշ: Աստվածաշունչը հենց այդպիսի ուղենիշ է, որի հետևից գնալով և աշխատելով կատարել Աստծո պատվիրանները, մարդը կարող է հասնել բարիքների , առատության և իշխանության: Այդպիսի օրինակները շատ են Աստվածաշնչում: Սողոմոն Իմաստունի օրինակը դրա վառ ապացույցն է: Սողոմոնին Աստված ասաց.«Սողոմոն խնդրիր ինձանից ինչ ուզում ես, որ անեմ քեզ համար»: Սողոմոնը խնդրեց իմաստություն, որ երկիրը կառավարի Աստվածային իմաստությամբ: Այդ խնդրանքի համար Աստված Սողոմոնին տվեց և՛ իմաստություն, և՛ հարստություն, և՛ հզորություն: Աստված ամենամեծ ուսուցիչն ու դաստիարակն է, որ եղել է մարդկության պատմության մեջ: Դաստիարակություն է Քրիստոսի կյանքն ընդհանրապես: Նա իր կյանքով մեզ ցույց տվեց, թե ինչպես պետք է սիրել մերձավորին, անծանոթին, ինչպես օգնել նեղության մեջ գտնվողներին, աղոթել անգամ թշնամիների համար: Սա դաստիարակության դասական օրինակ է: Բնականաբար մարդը չի կարող այդ ամենը անել Աստծո նման, բայց պետք է փորձի մոտենալ դրան, քայլի ճշմարտության ճանապարհով, որ հասնի երջանկության՝ Աստվածային փրկության: Դաստիարակությունը մարդկային կյանքի ամբողջ ընթացքին հավասար քայլում է նրա հետ հավասար և անբաժանելի է: Քանի որ Աստված անմահ և անսահման մեծ է , ուրեմն դաստիարակությունն էլ պետք է , որ այդպիսին լինի:Ինչքան գեղեցիկ և պարզ է պատմում Քրիստոսը առակներ և մեկնում դրանց իմաստը, բայց այն հասանելի դարձնում շատ քչերին, որ ինչպես ինքն է ասում.«Հասկանում են նրանք , ում տրված է հասկանալու»: Դաստիարակել կարելի է և օրինակով և խոսքով կամ երկուսը միասին, բայց դա պետք է արվի համբերատար և երկար ժամանակի ընթացքում:Առակները, ինչպես ասվեց, նույնպես դաստիարակչական մեթոդների թվին են պատկանում՝՝հատկապես Աստվածաշնչյան առակները:Առակների դերը չի

կարելի չգնահատել: Քանի որ առանց առակների Աստվածաշունչը կիսատ կմնար և շատ բաներ՝ չլուսաբանված:Քրիստոսը պատմելով առակներ, տարբեր նպատակներ է հետապնդել: Մի մաս առակներում նա խոսում է Երկնքի Արքայության, մի մասում՝ ընկերասիրության, մյուսում՝ հավատարմության և այլ գաղափարների մասին: Առակների դաստիարակչական նշանակությունը շատ մեծ է նաև մարդկանց նոր-նոր ձևավորվող կրոնական համոզմունքների և գաղափարների վրա: Այս տեսանկյունից ամեն մի առակ ունի իր ուրույն նշանակությունը և դերը նոր կրոնական գաղափարախոսությունը տարածելու գործում: Աստվածաշունչը դաստիարակչական մի հսկայածավալ ու անկրկնելի Մատյան է:Առակները մեծ դեր խաղացին Քրիստոնեության տարածման և ամրապնդման գործում: Քրիստոսը պատահական չէ, որ քարոզում էր առակների միջոցով: Ինչպես նշում են Աստվածաշնչի մեծանուն հետազոտողները առանց առակների ուղղակի հնարավոր չէր լինի Քրիստոնեության հաղթանակը հեթանոսության հանդեպ: Առակների բարոյական կողմը չափազանց մեծ է : Այդ առակներից կարծես ճառագում է բարոյականությունը:Պատմելով առակներ, Քրիստոսը շատ լավ գիտեր դրանց արժեքը և ներգործությունը հրեաների և հեթանոսների վրա:Առանց ապահովելու նոր ուսմունքի բարոյական կողմը, անհնար էր դրանց մարդկանց գիտակցությանը հասցնելը:Աստվածաշնչյան առակների մեծագույն արժեքներից մեկն էլ հանդիսանում է դաստիարակչական կողմը: Այս դեպքում ուղղակի անհնար կլիներ Քրիստոնեություն տարածել:Դստիարակությունը բոլոր դարերում էլ եղել է, կա ու կմնա արժեքների մի ամբողջ համակարգ, միայն փոխելով իր ձևերն ու մեթոդները:Այժմ ավելի մանրամասն վերլուծենք առակների դաստիարակչական համակարգը և տանք դրանց անհրաժեշտության աստիճանը ցանկացած իրավիճակում, ընդհանրապես, մասնավորապես՝ Աստվածաշնչյան գաղափարների տարածման ընթացքում: Հրեաները շատ էին սիրում այն առակները, որոնք կապ ունեին նյութական և ունեցվածքի դիզման և ձեռքբերման հետ: Նրանք հատկապես շլանում էին Սողոմոն թագավորի ունեցվածքի պատմությամբ, երբ Աստված Սողոմոնին տվեց հսկայական կարողություն և փառք: Դրա համար էլ Աստված՝Նույն ինքը Հիսուս Քրիստոսը իր քարոզները կամ սկսում, կամ՝ավարատում էր առակներով: Հրեաները գաղափար չունեին Սուրբ Երրորդության մասին, դրա համար էլ Քրիստոսը առակներում տալիս է նաև Սուրբ Երրորդության գաղափարը:Այպիսով առակների դերը չափազանց մեծ է դաստիարակչության գործում: Առաջին հայացքից դա կարող է ոմանց մոտ երկրորդական համարվել, բայց իրականում դա ամենագլխավորն է Քրիստոնության քարոզման և տարածման ամբողջ ընթացքում: Առանց այդ գաղափարի չէր կարող տարբերվել Քրիստոնեությունը Միաստվածությունից և մնացած կրոնական գիտելիքներից:Իսկ այդ գաղափարը հիմնային էր այդ ժամանակ, քանի որ,այն նոր էր տարածվում և ուսուցանվում հրեաների մեջ, որոնք ամուր կառչած էին իրենց կրոնին: Մնացած ժողովուրդներին նրանք համարում էին հեթանոսներ և անհավատներ և նրանց նայում էին թշնաբար: Ահա, թե ինչու Սուրբ Երրորդության գաղափարը ընդունել տալը և քարոզելը դարձավ օրակարգի հարց: Քրիստոս ինքն էլ բազմաթիվ անգամներ իրեն կոչում էր Միածին Աստծո Որդի, դրանով ցույց տալով և իր Աստվածային ծագումը և Աստծո կողմից առաքված լինելը: Այստեղ կա մի շատ կարևոր պահ ևս: Եթե Քրիստոսը առաքված է Աստծո կողմից, ուրեմն նրա վարդապետությունն էլ

Աստվածային է, որին պետք է հավատալ անվերապահորեն, իսկ հրեաները Քրիստոսին չէին ընդունում այդպիսին, այսինքն՝Աստվածային:Քրստոսը ամեն ինչ անում էր, որ մարդիկ հասկանան ու ընդունեն իր, այսինքն Աստվային գաղափարների , միակ և ճմարիտ լինելը, բայց հրեաները տարված իրենց աշխարհիկ և հոգևոր ֆանատիզմով, ոչ միայն չընդունեցին Քրիստոսի ուսմունքը, այլև՝խաչեցին , որպես մի ավազակի, նրանց մեջտեղում : կատարվեց Եսայի մարգարեի խոսքը.«Եվ նա կդասվի ավազակների շարքը»: Այստեղից կարելի եզրակացնել, որ հրեաները՝մասնավորապես փարիսեցիները, օրեսգետները, դպիրները և օրինաորները, ոչ թե չէին կարողոնում, այլ չէին ուզում ընդունել Աստվածային ճշմարտությունը:Դրա համարել Քրիստոսը ամեն ինչ օգտագործում էր նրանց ճիշտ ճանապարհի վրա կանգնեցնելու համար: Այդ ճանապարհը հեշտ չէր և Քրիստոսը դա շատ լավ էր հասկանում և օգտագործում էր ամեն մի միջոց , այդ թվում նաև առակները: Այսպիսով՝ Քրիստոնեությունը տարածելու համար առակները , կարելի է ասել դարձան պարտադիր պայման և անհրաժեշտություն: Առակներով քարոզելը ավելի հասու էր դարձնում Քրիստոնեության իմաստն ու նշանակությունը: Ավելի ճանաչաողական նշանակություն էր ձեռք բերում հասարակ և անուս մարդկանց շրջապատում, իսկ, որ ամենակարևորն է մարդկանց սրտերում և հոգիներում: Եզրակացությունը այստեղ մեկն է. Աստվածաշնչյան առակների դերը անգնահատելի է Քրիստոնեական ճշմարիտ ուսմունքը քարոզելու և տարածելու համար:Աստվածաշնչյան առակները տվյալ դեպքում կատարում են մի քանի ֆունկցիա.

ա)Հրեաները սովոր էին ուսուցանել առակներով և ավելի հասանելի էր,

բ)Առակներով քարոզելը հասկանալի էր մարդկանց համար, որովհետև այն նոր գաղափարներ էր քարոզում,

գ)Առակները ունեին դաստիարակչական մեծ նշանակություն հրեաների համար, հատակապես Աստվածաշնչյան առակները,

դ)Քրիստոսը քարոզելով առակներով ավելի հեշտ էր դարձնում Երկնքի Արքայությանը հասնելը:

Մենք կփորձենք տալ այս գաղափարների վերջնական արդյունքները:

Ոսուցումն ու դաստիարակությունը , ինչպես ասվեց միշտ էլ ընթացել են միասին. առանց մեկի , մյուսը՝ ուղղակի հնարավոր չէ: Դա երկարատև ու համերատար մի գործընթաց է, որի արդյունքը երևում է տարիների ընթացքում, այն էլ ոչ միշտ է մարդ հասնում ցանկալի արդյունքի:Դրա համար դաստիարակել նշանակում է համբերատար և նպատակամղված աշխատանք տանել , հաճախ ամբողջ կյանքի ընթացքում: Դաստիարակությունը մեծագույն արժեք է համայն մարդկության համար բոլոր ժամանակներում և նրա նշանակությունը անուրանալի է մարդու գիտակցական կյանքում: Աստվածաշնչյան առակները իրենց մեջ կրում են վերը թվարկված բոլոր արժեքները , առանց որոնց Քրիստոսը , էլ ավելի մեծ դժվարությունների կհանդիպեր Քրիստոնեություն տարածելու գործում: Առակները ոչ միայն կրում էին խրատական և դաստիարակչակն բնույթ, այլև՝ գաղափարական արժեքներ են ցանկացած ուսմունքի և գաղափարախոսության տարածման համար, տվյալ դեպքում Քրիստոնեության տարածման համար: Այս տեսանկյունից առակների

դաստիարակչական նշանակությունը ուղղակի անգնահատելի է: Կամ ինչ կլիներ Աստվածաշանի վիճակը առանց առակների բաժնի, որոնք բավականին մեծ թիվ են կազմում՝մոտ քառասունհինգ առակ է պատմել Հիսուս Քրիստոսը և բոլորն էլ ունեն դաստիարակչական մեծ նշանակություն: Առակների դերը նաև մեծ է կրոնական առաումով: Այն ոչ միայն դաստիարակում, այլև հնազանդություն, սեր, խաղաղություն և իմաստություն է սերմանում : Այս կապակցությամբ մեր կարծիքով առակները դառնում են ուղղակի անփոխարինելի: Քրիստոսը դա շատ լավ գիտեր, թե ինչպես և որտեղ օգտագործեր առակները, որ հասներ ցանկալի արդյունքի և հասավ , որովհետև այն ինչ անում է Աստված ճմարիտ է և արադար:Մեր կարծիքը եղել և մնում է նույնը.

Առակները դաստիարակչական առումով անհրաժեշտ էին ու անփոխարինելի և Քրիստոնեության քարոզման ու տարածման գործում, և միջոց ու գործիք էին դաստիարակության համար անհրաժեշտ:Հաճախ լսում ենք, ինչ կապ կա ուսուցման և դաստիարակության մեջ: Այդպիսի կարծիք հայտնողները մոռանում են մի շատ կարևոր բան.«Դաստիարակելով՝ ուսուցանում ենք, ուսուցանելով՝ դաստիարակում»: Այս գաղափարը պետք է ընկած լինի ցանկացած գաղափարի, գործի, ուսմունքի տարածման հիմքում:Մեր կարծիքն այն է, որ դաստիարակաչական առումով առակները հանդիսացան այն անկյունաքարը, որի հիման վրա Հիսուս Քրիստոսը Կառուցեց իր քարոզչական ամողջ գործունեությունը: Քրիստոսը քարոզել է ընդամենը երեք տարի, բայց այդ ընթացքում նա պատմել է մոտավորապես քառասունհինգ առակ. դա քիչ է , թե՝շատ ...:

Եզրակացություն

Եզրզկացությունը միանշանակ է. ի հարկե՝ շատ: Ինչու՞, ուրեմն այդքան շատ, պատասխանը միանշանակ է, որովհետև առակների դաստիարակչական նշանակությունը անչափ մեծ էր կրոնական գաղափարների քարոզչության համար և կարելի է ասել անփոխարինելի. ելնելով ժամանակի բարքերից և մարդկային սովորություններից ու կրոնական ըմբռնումներից: Եզրահանգումը այստեղ այլ լինել չի էլ կարող, դա բացառվում է: Պատճառը՝ Աստված ինքն է ընտրում և իրագործում, որի անունն է ճշմարտություն և Երկնքի Արքայություն, որից բխում է ամեն ինչ: Մենք մարդկային կյանքի բոլոր կողմերը քննելով եկանք այն եզրահանգման, եթե դաստիարակությունը, բացակայեր, որևէ պարագայում . մարդկությունը կնմանվեր բնազդական կենդանիներին, առանց բանականության, որը մարդկանց տրվել է Աստվածային հաճությամբ: Առակների դաստիարակչական նշանակությունը այնքան պարզ ու միևնույն ժամանակ, շատ դեպքերում, անհասկանալի է դառնում մարդկանց համար, որ մարդկությունը միշտ էլ ձգտել է հասնել դրանց իմաստի մեկնությանը՝ հիմք ընդունելով դաստիարակությունը:Այստեղ էլ եզրակացությունը մեկն է , առակները ցանկացած առումով կարևոր տեղ են զբաղեցնում մարդկային գիտակցական գործունեության ընթացքում: Այս հետազոտական փոքրիկ աշխատանքը միայն մեկ նպատակ էր հետապնդում, ցույց տալու համար այն տեղը և դերը, որ ունի դաստիարակչությունը, ոչ միայն կրթության, այլև դաստիարակության ու մարդկային փոխհարաբերությունների ընթացքում ընդհանրապես: Այստեղից մի նոր եզրակացություն, Աստվածաշնչյան առակները երկնային պարգև էին Աստծո կողմից ուղղված մարդկությանը, փրկվելու և ճմարիտ կյանքով ապրելու համար: Այնպես, որ եթե մի գաղափար Աստծուց է `ուրեմն ճիշտ է և անվերապահ կիրառելի: Այս առումով առակները, ինչպես մենք հույս ունենք, հասկանալի պատճառներով , ունեն դաստիարակչական անուրանալի նշանակություն, ինչպես Աստվածաշնչի քարոզման, այնպես էլ՝ առաջին հերթին դաստիարակության համար:Այսպիսով դաստահարակությունը իր նշանակությամբ և կարևորությամբ առաջնային և անուրանալի նշանակություն ունի մարդկային ամբողջ կյանքի համար:

Գրականության ցանկ

1. Աստվածաշունչ Ավետարաններ

2. Մաղաքիա Արք. Օրմանյան Համապատում

3.Ադամ Քահանա Մակարյան Քրիստոնեական Իսկությունը

4.Գալուստ Մանուկյան Մեկնություն առակների